

**ՄԵՂՄԱԳԻՐ**

**ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության մշակույթի ոլորտի միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքների մասին հաշվետվության**

ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ 2018 թվականին ՀՀ մշակույթի նախարարությանը վերապահված կետերին համապատասխան իրականացվել են.

**✓ «161.» Դրամաշնորհների հատկացման բաց-մրցույթային համակարգի ներդրման ուղղությամբ.**

2018 թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ մշակույթի նախարարի N 765-Ա հրամանի համաձայն 2019 թ. իրականացվող մշակույթային ծրագրերի համար 8 անվանակարգերով հայտարարվել են մրցույթներ, և հանձնաժողովները սկսել են հայտերի քննարկման գործընթացները:

**✓ «163.» Արտևեմենտային համակարգի ներդրման ծրագրի իրականացման ուղղությամբ.**

ՀՀ մշակույթի ու ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից 2018 թ. հոկտեմբերի 31-ին հաստատվել է N 654-Ա համատեղ հրամանը: Ծրագրի առաջին՝ թանգարանային այցելությունների փուլը մեկնարկել է 2018 թ. նոյեմբերի առաջին տասնօրյակում (350 000 աշակերտ), 2018 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակի տվյալներով՝ 50 թանգարան (այդ թվում մասնաճյուղեր՝ 15008 աշակերտ և 642 ուսուցիչ):

**✓ «164.» «Քո արվեստը դպրոցում» դրամաշնորհային ծրագրի իրականացման ուղղությամբ.**

ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացվում է «Քո արվեստը դպրոցում» ծրագիրը՝ դասական երաժշտություն, կերպարվեստ և գրականություն ուղղություններով: Ծրագիրը մեկնարկել է 2018 թ. դեկտեմբերին և կավարտվի 2019 թ. մայիսին:

**✓ «165.» ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտական և մանկավարժական կազմին ուսումնամեթոդական և գործնական օգնության ուղղությամբ.**

Իրականացվել է առարկաների և մասնագիտությունների գծով պահանջարկի ուսումնասիրություն, մշակվել են ՀՀ երաժշտական, արվեստի, գեղարվեստի և սրարարվեստի դպրոցների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները, «Մշակույթային կրթության աշակցության» հիմնադրամի մասնագետների միջոցով իրականացվել է «Ուսումնամեթոդական և գործնական օգնության» և «Ուսուցիչների վերապատրաստում» ծրագրերը:

**✓ «166.» «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման» ծրագրի իրականացման ուղղությամբ.**

Պահանջարկի ուսումնասիրության հիման վրա ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 18 անուն 97 երաժշտական գործիք, որոնք բաշխվել են ՀՀ մարզերի դպրոցներին:

**✓ «167.» «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակման» ծրագրի իրականացման ուղղությամբ.**

Հրատարակվել է 15 ուսումնամեթոդական ձեռնարկ և դասագիրք, որոնք տրամադրվել են հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներին և կընդգրկվեն ուսումնական ծրագրերում:

**✓ «168.» Մարզերում երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների զարգացման ծրագրի իրականացման ուղղությամբ.**

Իրականացվել են շրջայցեր ՀՀ մարզեր, կատարվել է իրավիճակի վերլուծություն և խնդիրների քարտեզագրում, կազմվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի երաժշտական, արվեստի, գեղարվեստի և սրարարվեստի դպրոցների գործունեության վերաբերյալ 2018 թ. տեղեկագիրը, առաջարկներ են ներկայացվել «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու, մշակույթային կրթության ոլորտի մասնագետների վերապատրաստման և բուհերում մասնագետների պատրաստման վերաբերյալ:

**✓ «169.» Հայաստանում միջազգային փառատոների և մրցույթների, հեղինակավոր նախագծերի իրականացման ուղղությամբ.**

Նախարարության աշակցությամբ իրականացվել են Արամ Խոսչատրյան, «Աերածնունդ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթները, «Երևանյան հեռանկարներ», «Արմենիա», Արամ Խոսչատրյանի անվան, «Երևան ջազ ֆեստ-2018», «Նոր անուններ» պատանի երաժիշտ-կատարողների, Զ. Պենդերեցոկու ծննդյան 85-ամյակին նվիրված, Երևանի երաժշտական միջազգային փառատոները, «Կոմիտաս» փառատոն-գիտաժողովը, «Թատերական Լոռի», «Հայ ֆեստ», «Երևանի Ծեքսպիլյան», «Արմոնոն» մոնոներկայացումների, «Թումանյանական հեքիաթի օր» թատերական միջազգային փառատոները, «Ոսկե Ծիրան», «Մոսե», «Ֆրեսկո», «Ռեանիմանիա», «Կին», «Երևանի կարճամետրաժ ֆիլմերի», «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային կինոփառատոները, Համահայկական երգչախմբի և նվագախմբի համահայկական նախագծերը, «Հարստանը խաղաղության խաչմերուկում» ֆոլկլորային փառատոնը և այլ ծրագրեր, որոնց մասնակցել են հարյուրավոր հյուրեր աշխարհի տարբեր անկյուններից:

**✓ «170.» Մարզերում առկա մշակույթային օջախների վերագործարկման ուղղությամբ.**

Ձևավորվել է աշխատանքային խումբ, իրականացվել են շրջայցեր ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի թվով 22 հաստատություն), որտեղ տեղի են ունեցել հանդիպումներ ոլորտի պատասխանատուների հետ, «Երևանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ին հատկացված շենքի հիմնանորոգման և թանգարանային գործունեության համար վերակառուցման նպատակով ՀՀ մշակույթի նախարարությունը կազմակերպել է դրամահավաք, որի արդյունքում հավաքվել է 10.5 հազ. դրամ:

**✓ «172.» Մայրաքաղաքում և մարզերում ներառական ծրագրերի իրականացման ուղղությամբ.**

- «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագրի շրջանակներում կազմակերպվել է արվեստի և արհեստների անվճար ուսուցում հաշմանդամություն ունեցող 614 երեխայի համար՝ 12 մասնագիտությամբ:

- Իրականացվել են Հիվանդ երեխաների միջազգային օրվան նվիրված, «Այրելու սայրիլ» խորագրով, Հայաստանի կույրերի միավորման երաժշտական կոլեկտիվների՝ Էրեբունի-Երևանի 2800-ամյակին նվիրված, Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված աշուղական բարեգործական, «Մարգարիտային ներառական կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած բարեգործական համերգները, Հոգեկան ախտորոշում ունեցող անհասների ստեղծագործական աշխատանքների ցուցադրությունը, «Տեսնել մատերով» նախագիծը, «Առախնե» կանանց ՀԿ-ի կողմից կազմակերպված հաշմանդամների միջազգային օրվան նվիրված միջոցառումը, «Բեմը բոլորին է» ներառական միջոցառումը:

**✓ «176.» «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի «Մշակույթային ժառանգության պահպանման, կառավարման և արժևորման տարածաշրջանային կենտրոն» մասնաճյուղում կադրերի վերապատրաստման ծրագրի իրականացման ուղղությամբ.**

Հայ-Իտալական մշակութային համագործակցության շրջանակում ՀՀ և Իտալիայի նախագահների մասնակցությամբ բացվել է «Հայ-իտալական մշակութային ժառանգության կենտրոնը», որը ստեղծվել է որպես «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ: Կենտրոնում սկզբնական շրջանում աշխատելու են 6 մասնագետ:

✓ **«187.» Հեռուստատեսության պատշաճ մակարդակի ապահովման, հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեդիայի ռեսուրսներում մշակութային բաղադրիչի ընդլայնման ուղղությամբ.**

«Մշակութային Հայաստան» խորագրով 24 հեռուստահաղորդման պատրաստման աշխատանքները և «Հայաստանի ճամփերով» հեռուստանախագծի շրջանակներում՝ 32 հաղորդման պատրաստման և հեռարձակման աշխատանքները:

✓ **«188.» Ցուցահանդեսների, հայկական մշակույթի օրերի շրջանակներում և այլ ձևաչափերով հայկական պատմամշակութային ժառանգության, արվեստի ներկայացման ուղղությամբ.**

**Ապահովվել է** Հայաստանի հանրապետության մասնակցությունը տարբեր միջազգային երաժշտական մրցույթներին, հորելյանական փառատոներին, համերգներին, երաժշտական նախագծերին, վավերագրական և անիմացիոն ֆիլմերի միջազգային կինոփառատոներին, հյուրախաղերով, համերգային ծրագրերով, անհատական, լուսանկարչական ցուցահանդեսներով, առանձին տաղավարներով հայկական մշակույթը ներկայացվել է աշխարհի բոլոր անկյուններում:

✓ **«189.» Ազգային առանձնահատկություններն արտացոլող տարբեր միջոցառումների՝ մշակույթի օրերի և այլ ձևաչափերով հայ հանդիսատեսին օտար մշակույթների ներկայացման ուղղությամբ.**

Կայացել է 5 ներկայացում, 9 համերգ, 6 ցուցահանդես, դասախոսություններ, վարպետության դասընթացներ, միջազգային համաժողովներ, միջոցառումներ, Հայաստանում կամակերպվել է «Եվրիմաժի» կառավարման խորհրդի 150-րդ նիստը, «Ռուսական ֆիլմերի շաբաթ Հայաստանում» ծրագիրը:

✓ **«190.» Հայ ստեղծագործական միավորների զարգացման և միջազգային համագործակցության խթանման, միջազգային կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և գործընթացներին մասնակցության ուղղությամբ.**

- ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության մշակութային հաստատություններում Փրանկոֆոնիայի ծրագրերի շրջանակում կայացել է շուրջ **40 միջոցառում**, այդ թվում՝ ցուցահանդեսներ, գրքերի հայերեն թարգմանության շնորհանդեսներ, համերգներ, օպերայի բեմադրություն:

- ԱՊՀ կառույցի հետ համագործակցության համատեքստում՝ **«Գորիսը՝ 2018 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք»**

**ծրագիրը, որի շրջանակում կայացել է ... ծրագիր:**

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ իրականացվել են միջազգային խորհրդաժողովներ, կոնֆերանսներին մասնակցություն:

- Երևանում կայացել է ԵԻՏ հետ համատեղ իրականացվող Եվրասիադոկ ծրագիրը:

- ԵՄ հետ համագործակցության համատեքստում հիմնվել է «Ստեղծագործ Եվրոպա. Հայաստան» հարթակը: